*սէ, որ զմիաւորութիւն[1] ճառեալ աւանդեցին[2] Հայաստանեայցս[3] ամենեցուն[4], զոր ընկալան[5] հայրապետքն, որ զկնի, յառաջ քան զսոսա[6], յաջորդեալ էին[7] յաթոռ հայրապետութեան[8] սրբոյն Գրիգորի, որ[9] են այսոքիկ.*

*Առաջին[10]. տէր Ներսէս՝ ամս Թ[11], առ որով[12] ժողովն Դունի[13] եղեւ, Բ.[14] տէր Յովհաննէս՝[15] ամս ԺԵ, Գ.[16] տէր Մովսէս՝[17] ամս Լ, Դ.[18] տէր Աբրահամ[19] ամս ԻԳ, Ե.[20] տէր Կոմիտաս՝ ամս Ը, Զ.[21] տէր Քրիստափոր՝ ամս Գ[22]: Այսոքիկ են կաթուղիկոսք[23] Հայոց՝[24] խոստովանութեամբ սուրբ[25] ժողովոյն Դունի, որք են կարգեալ[26] մինչեւ ցԵզր[27] կաթուղիկոս[28] քաղկեդոնիկ, զոր ո՛չ ընդունի սուրբ եկեղեցի[29]:*

*[30]Վասն զի այս Եզր ընկալաւ զհայրապետութիւնն հրամանաւ Հերակղի[31] թագաւորին Հոռոմոց[32], եւ ընդդէմ եղեւ սուրբ ժողովոյն Հայոց, վասն զի հաւանեալ ընկալաւ զժողովն Քաղկեդոնի եւ բաժանեաց[33] ի միմեանց զմիաւորեալ Ծնունդն եւ զՄկրտութիւնն[34], եւ զխաչեցարն յերիս սրբասացութեանցն[35] որոշեաց[36]: Եւ զկնի նորա[37] կաթուղիկոսք Զ կարգեալք՝ մինչեւ ցԵղիա[38], որ էր աւանդութեամբ[39] նոցա[40]: Առաջին. Եզր՝ ամս Ժ, Բ. տէր Ներսէս՝ ամս Ի, Գ. տէր Անաստաս՝ ամս Զ, Դ. տէր Իսրայէլ՝ ամս Ժ, Ե. տէր Սահակ՝ ամս ԻԶ, Զ. տէր*

1 ii$_1$m *զմիաւորութիւնն* փխ *զմիաւորութիւն* (ae)

2 e *հաստատեցին* փխ *ճառեալ աւանդեցին* (aii$_1$m)

3 ii$_1$m *Հայաստանեացս* փխ *Հայաստանեայցս* (ae)

4 e չիք *ամենեցուն* (aii$_1$m)

5 ii$_1$m *ընկալեալ* փխ *ընկալան* (ae)

6 i *զսոքա*

7 ii$_1$m *յաջորդէին* փխ *յաջորդեալ էին* (ae)

8 e չիք *հայրապետութեան* (aii$_1$m)

9 e *որք* փխ *որ* (aii$_1$m)

10 aii$_1$m *Առաջինն* փխ *Առաջին* (e)

11 i *ինն* փխ *Թ*

12 m *որովն* փխ *որով* (aeii$_1$) (բացի այդ՝ m-ում յաջորդող *ժողովն* բառը գրուած է տողավերեւում)

13 ei *Դւնի* փխ *Դունի* (ai$_1$m)

14 aii$_1$m *եւ* փխ *Բ.* (e)

15 e *Յովանէս*, i *Ովհաննէս*, i$_1$ *Յովաննէս* m *Յոհաննէս* փխ *Յովհաննէս* (a)

16 aii$_1$m *եւ* փխ *Գ.* (e)

17 i$_1$m *Մօսէս*

18 aii$_1$m *եւ* փխ *Դ.* (e)

19 i$_1$ *Աբրաամ*

20 aii$_1$m *եւ* փխ *Ե.* (e)

21 aii$_1$m *եւ* փխ *Զ.* (e)

22 aii$_1$m *Բ* փխ *Գ* (e)

23 a *կաթողիկոսք*, m *կաթողիկոս* փխ *կաթուղիկոսք* (ii$_1$)

24 e չիք *են կաթուղիկոսք Հայոց* (aii$_1$m)

25 e չիք *սուրբ* (aii$_1$m)

26 e *Դւնայ* փխ *Դունի...կարգեալ* (aii$_1$m)

27 e *յԵզր* փխ *ցԵզր* (aii$_1$m)

28 i$_1$ *կաթողիկոս*

29 Հմմտ. նախորդ էջի ծան. 2:

30 s *Ը. Ութերորդ ժողով արար Ներսէս Շինօղ ի սուրբ Շողակաթ, որ է մայր եկեղ[եց]եաց, յաւուրս Կոստանդնի՝ որդւոյ Հերակլի, յորում էր Ղ ամ թուականութեանս Հայոց: Եւ յաւել ի Սուրբ Աստուածն զԽաչեցարն, զոր բարձեալ էր ի Քաղկեդոնի զառաքելադիր աւանդն: Զոր եւ Պետրոս Անտոքացին, որ յետ Խ ամի ժողովոյն Քաղկեդոնի եղեւ, նզովեաց զնոսա, որք բարձին զԽաչեցարն: Զի Յոյնք այսպէս ստուգաբանեն, թէ յաւուրս Թէոդոսի Փոքու յայտնեցաւ Պրոկղի զՍուրբ Աստուածն ասել ի վերայ Երրորդութեանն, եւ ուրացան ի փրկութենէ խաչին: Իսկ սրբոյն Պրոկղէ մինչեւ ցՆերսէս էր Ծ ամ, որ զՍրբոցն հաստատեաց* փխ *Վասն զի ...Աստուծոյ մերոյ* (aeii$_1$m) (եօթանասուն տող):

31 ii$_1$m *Հերակլի* փխ *Հերակղի* (a)

32 m *Հռոմոց* փխ *Հոռոմոց* (aii$_1$)

33 i *բաժանեալ*, m *բաժանեացն* փխ *բաժանեաց* (ai$_1$)

34 m *զՄկրտութիւն* փխ *զՄկրտութիւնն* (aii$_1$) (գուցէ վերականգնելի է *Մկրտութիւնն*. տե՛ս նախորդիւ):

35 m *սրբասացութեանց* փխ *սրբասացութեանցն* (aii$_1$)

36 e չիք *վասն զի այս...որոշեաց* (am) (չորս տող)

37 e չիք *նորա* (aii$_1$m)

38 am *ցԵղիայ* փխ *ցԵղիա* (ii$_1$)

39 m *աւանդութեան* փխ *աւանդութեամբ* (aii$_1$)

40 e չիք *կարգեալք՝ մինչեւ...նոցա* (aii$_1$m)